

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ՄԸՍԸՐԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

16 Օգոստոս 1965ին, Պէյրուսի մէջ, կը վախճանէր Հ. Յովհաննէս Մըսըրեան՝ անդամ Յիսուսեան Միաբանութեան, որ քառասուն երկար տարիներ, անսպառ եւ ունեւոր, աշխատեցաւ հայ մշակոյթի անդամներին մէջ, դրական առատ հոլովման մը ձգելով հայ ժողովուրդին:

Հմուտ պատմաբան եւ բանասէր, կը պեղէր մեր անցեալը, նոր լոյս սրահելով հայոց պատմութեան շատ մը մթին կէտերու վրայ:

Երկար է շարքը իր հայագիտական եւ արեւելագիտական գրութիւններուն, որոնք գրուած են թէ՛ հայերէն եւ թէ՛ ֆրանսերէն լեզուներով:

Պէյրուսի St. Joseph համալսարանի «Հայագիտական Ամպլիոն»ին մշտավառ ջահն էր ինք, որ երկար տարիներ, իրը սղբերը մը յորդառատ, դասախօսեց՝ ընտրեալ սերունդ մը պատրաստելով:

Հայրենասիրական վառ զգացումներէ մղուած նետուեցաւ նաեւ ազգային դործերու մէջ. թանկագին է իր հայանպաստ դործունէութիւնը եւ քարոզչութիւնը, կատարուած թէ՛ դործով եւ թէ՛ գրչով:

* * *

Հ. Յովհաննէս Վրդ. Մըսըրեան ծնած է Երզնայ (Սեբաստիոյ Կուսակալութիւն), 1888ի Մայիս 31ին: Եօթը տարեկան էր 1895ի ջարդերուն. թուրք զօրքի ընտանիք մը պահած է զինքը իր երկու քոյրերուն եւ եղբայրներուն հետ տան առաստաղին տակ: 1902ին Նուրիկա կը զրկուի՝ յաճախելու համար Յիսուսեան Հայ-

րերու Փրանսական վարժարանը. ընթացքը կ'աւարտէ 1906ի ամառը ջին, եւ, իբր վարժարանէն՝ մայրը զինք, երկու եղբայրներուն հետ, ուխտի կը տանի Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը: Չորս տարի ուսուցչութիւն կ'ընէ իր վարժարանին մէջ եւ աջ բաղուկը կ'ըլլայ Երիտասարդաց Ակումբի վարիչ վարդապետին:

1910ի արձակուրդին, Պոլսոյ ճամբով, կ'անցնի Եւրոպա: Տարի մը Իտալիոյ մէջ (Թորինոյի մօտ) կը նուիրուի լատիներէնի ուսման, որպէսզի կարենայ, 1911ի Հոկտ. 31ին, ընդունուի Յիսուսեան Միաբանութեան մէջ (Լիոնի նահանգ):

Տասը տարի (1911-1921) կը հետեւի Միաբանութեան սովորական պարտադիր ուսումներուն - հոգեւորական, դրական, փիլիսոփայական եւ աստուածաբանական: Յունարէն լեզուի ալ մասնաւոր դասեր կ'առնէ: Քահանայ կը ձեռնադրուի 1921ի Մարտ 19ին:

1922ի Սեպտեմբերին կը զրկուի Կ. Պոլիս, ուր ականատես կ'ըլլայ Փոքր Ասիայէն եւ Պոնտոսի ասիերէն նոր հասած հայ եւ յոյն զաւթականներու վիճակին, ինչպէս նաեւ նախապէս հասած «ճերմակ» ռուսերու կեանքին: Խաներու կամ դըպրոցներու մէջ զրկուած հայ խլեակներուն սրտածմլիկ պարագան զինքը խորապէս կը տպուորէ:

1923ի Յունուարին կ'անցնի Պէյրուս, կ'այցելէ Կիլիկիայէն ապաստանած դաղթականներու կայանները, եւ մեծաւորներու կարգադրութեամբ՝ կը մնայ հոն, ստանձնելով դաղթականներու հոգածութիւնը:

1923 եւ 1924 տարիներուն, Պէյրուսի մէջ կը հիմնէ անջատ նախակրթարաններ մանչերու եւ աղջկանց, խառն մանկապարտէզ, մատուռ եւ դարմանատուն:

1925-1926ին կը կանչուի Հռոմ, ուր հայագիտական դասեր կ'աւանդէ: Ապա բանախօսութիւններ տալով՝ Կ. Պոլիս, Պէյրուս, Դամասկոս, կ'անցնի Հալէպ, ուր կը հիմնէ եկեղեցի, վարժարան մանչերու եւ աղջկաներու, կը կազմակերպէ երեկոյեան դասեր՝ չափահասներու համար:

1926ին, Պէյրուսի մէջ, Մեծաւորները կը կարգեն զինքը Սէն-Ժոզէֆ Համալսարանի տեսական աստուածաբանութեան դասախօս, իբրեւ յաջորդ հայագէտ եւ աստուածաբան Հայր Ֆրանսուա Տուռնըրիդի: 1927 թուականին կ'այցելէ Երուսաղէմ ու կը վայելէ Եղիշէ Պատրիարք սաղէմ ու կը վայելէ Եղիշէ Պատրիարք Դուբեանի բարեացակամութիւնը: 1928 եւ 1929 տարիներու ամառները կը շրջապահէ հիւսիսային Սիւրիոյ եւ մասնաւորապէս Անտիոքի շրջանին հին ու նոր հայ զիւղերուն մէջ, քրիստոնէական հնութիւններ պեղելով:

1929-1932 կը մնայ Փարիզ՝ զարդանալու տենչով: Կը հետեւի հայ բաղդատաւոր կան լեզուաբանութեան, զոր կ'աւանդէին Ս. Մեյյէ՝ Քոլէժ տը Ֆրանսի, եւ Լուի Ա. Մեյյէ՝ Քոլէժ տը Ֆրանսիի մէջ: Կը Մարիէս՝ Էնսիթիլ Գաթուիլի մէջ: Կը հետեւի Գ. Մեյյէի հին քրիստոնէական եւ ժողովրդական արուեստի դասախօսութիւններուն, Շ. Տիլի քաղաքական պատմութեան Բիւզանդիոնի, Ռ. Ժենեսթալի կանոնադրական իրաւաբանական դասերուն եւ Շ. Պուլայէի ռուսերէն լեզուի քերականութեան: Ազգուած է ամէնէն աւերականութեան: 1932ին չորս ամիս կ'աւանդէ «Հայոց եկեղեցական միա կ'աւանդէ Սորպոնի Բարձր Ուսմանց պատմութիւն» Սորպոնի Բարձր Ուսմանց դպրոցին մէջ՝ Պրոֆ. Գ. Մեյյէի առաջարկով եւ իբր անոր փոխանորդը. չորս ամիս ալ «Յաղագս Խորհրդոյ Մարդեղութեան» (լատիներէն) Լիոնի Յիսուսեան Միաբանութեան Աստուածաբանական կաճառին մէջ:

Արձակուրդներու շրջանին կ'այցելէ



Հ. Յովհ. Վրդ. Մըսըրեան

Պրիւքսէլ, Լուվէն, Հռոմ, մանաւանդ Վիեննա ու Վենետիկ. կը ծանօթանայ ժամանակին բոլոր հայագէտներուն եւ զլիաւոր բիւզանդագէտներուն:

1932ի Սեպտեմբերին կը վերադառնայ Պէյրուս, 15 սնտուկ զրքերով ծանրաբեռն:

Իսկոյն կը մեկնի Անտիոքի շրջանը՝ պեղումներ կատարելու համար կրտսեր Սիւրիոյ Սիւրիականացի եւ Թովմաս Առաքելի աւերակ վանքերուն մէջ: Այս հնութեանց եւ Կասիոսի Սուրբ Պալլուսի մասին տեղեկագիր մը կ'ուղղէ Փարիզ, որուն հետեւանքով Ֆրանսայի «Արձանագրութեանց եւ Գեղեցիկ Դպրութեանց Ակադեմիան» իրեն առաքելութիւն եւ զըրամական նպաստ տուած էր պեղումները կատարելու:

Ութը տարի (1932-9) կը տեսնէ ամառնային պեղումները, որոնց արդիւնքը տարուէ տարի կը հաղորդէ Ակադեմիային: 1948ի Յունիս ամսուն, ընդհանուր Տեղեկագիր մը կը կարգայ Ակադեմիականներուն առջեւ:

1933ին երբ կը վերադառնայ Սէն Ժոզէֆ Համալսարանի Արեւելեան Դպրութեանց

Կաճառը. Հ. Մըսրէրեան կը ստանձնէ բիւզանդական եւ հայկական արուեստի դասեր, բայց բոլոր խնամքը կու տայ կադմակերպելու Հայագիտութեան ամպլիոնը: Կը դասաւանդէ Փրանսերէն լեզուով, քըննական-քաղաքական մեթոտով եւ յուսապատկերներու ընկերակցութեամբ կը ծանօթացնէ հայերու եւ օտարներու՝ հայոց պատմութիւնը եւ մշակոյթը:

Բազմիցս կատարուած դիմումներու ընդառաջելով, Հ. Մըսրէրեան կը սկսի դասաւանդել հայերէն ու կը մշակէ նոր ծրագիր, որպէսզի ուսանողները իրաւունք ստանային Արեւելեան Դպրոցութեանց վկայականին՝ հայագիտական հիմով:

Մրադրին մաս կազմող նիւթերն են՝ Լեզուաբանութիւն եւ գրաբար լեզու, Քաղաքական եւ տնտեսական պատմութիւն Հայոց, Հին եւ միջնադարեան մատենագրութիւն, Մշակութային խնդիրներ:

Նպատակն էր ապահովել զարգացումը ուսուցիչ-ուսուցչուհիներու, եւ ըստ կարելւոյն արթնցնել ու քաջալերել հայագիտական կոչում:

Դասընթացներուն կից կը բանայ կիրականօրեայ հայագիտական ասուլիսներ, մասնակցութեամբ քաղաքի լաւագոյն մտաւորականներուն:

1931ին անդամ կ'ընտրուի Փարիզի Ասիական Ընկերութեան եւ 1948ին՝ Բիւզանդադիտական Ուսմանց Միջազգային Ֆանձնախումբին:

Հ. Յ. Մըսրէրեանի մահով Հայ Աղբը եւ Մշակոյթը կը կորսնցնէ իր վաստակաւոր եւ անխոնջ մշակներէն մէկը:

Հ. Մըսրէրեանի գրական մեծարժէք վաստակը չենք կարող մանրամասնօրէն թուարկել: Բազմաթիւ դրախտական ու զրադատական յօդուածներ, հայ բանասէրներու եւ օտար հայագէտներու մասին կենսագրական ու գիտական ուսումնասիրութիւններ, յաճախ յօդուածաշարքերու ձեւով, կը մնան «Աղդարար»ի, «Մասիս»ի, «Աւետիք»ի, «Այդ»ի, «Յուսարբեր»ի, «Ակօս»ի էջերուն մէջ: Պէյրութի St. Joseph համալսարանի «Mélanges»ներն են որ առաւելագոյն կը ներկա-

յացնեն համեստ գիտնականին աշխատութիւնները՝ հնախօսական, դեղարուեստական, պատմական, իրաւաբանական ու մատենագրական բաժիններով: Անկարելի է մոռնալ իր դուլելի աշխատանքը՝ մատենագիտական ճիւղին մէջ. անկիւս ուշի ուշով կը հետեւէր՝ հետզհետէ աճող հայագիտական աշխատանքներուն. ըլլայ հայ, ըլլայ օտար շրջանակներու եւ յատկապէս Հայաստանի մէջ ու տարուէ տարի կազմակերպուած ասուլիսներով եւ յօդուածաշարքերով զանոնք կը ներկայացնէր հանրութեան: Արեւելագիտական ու բիւզանդադիտական համադրմանն ուղղուելու իր մասնակցութեան շնորհիւ, հայկական նիւթերով կը ճոխացնէր անոնց զեկոյցները: Անշուշտ բարեբար ձեռք մը պիտի դառնար մը՝ պատկառելի հատորի մը մէջ ամփոփելու այս ցիրուցան մարդարիտները:

Ահա ցանկ մը իր գլխաւոր աշխատութիւններուն, ուր պիտի նշմարուի իր բազմապիսի արտադրութիւններուն հետ, իր տիպարը՝ յարատեւ աշխատող ու պրպըտող կրօնաւորի, որ կ'իյնայ դրիշը ձեռքին, մինչ Պէյրութի տպարաններուն մէջ կը հրատարակուին իր երկերը:

19 Bulletin Arménologique, I^o Cahier: Extrait des MUSJ, Beyrouth, 1948, t. 27, fasc. 10, pgg. 135.

Հատորը նուիրուած է հայ իրաւագիտութեան, եւ յատկապէս Դաւիթ Աւակոյ որդի († 1140) եւ Միսիթար Գոշ († 1213) կանոնադէտներուն. կ'ուսումնասիրուին անոնց դարաշրջանը, անձերը, կանոնադրի ձեւադիրներն ու ձեւադրախումբերը, բովանդակութիւնը, եւ իւրաքանչիւրին դիրքը՝ հայ իրաւունքի պատմութեան մէջ: Բանասիրական մանրակրկիտ աշխատութիւն մըն է, հարուստ մատենագիտութեամբ եւ կարծիքներու օղտադրածումով: Երկրորդ մասը արշաւ մըն է հայ բժշկութեան պատմութեան մարզին մէջ, ոսկեղաբէն մինչեւ արարական շրջան, Եզնիկէն Հերացի ու Յովհ. Երզնկացի:

Արուեստի բաժինը կ'ընդգրկէ հայ մանրանկարչութեան, ճարտարապետութեան, արձանագործութեան եւ այլ փոքր արուեստներու մասին համադրական տեսութիւններ:

2) Bulletin Arménologique, II^o Cahier: Extrait des MUSJ, Beyrouth, 1953, t. 30, fasc. 4, pgg. 249.

Հատ աւելի պատկառելի հատոր մը, որուն կուրիզ կը կազմէ հայ «Յայամաւուրք»ի ուսումնասիրութիւնը. արժանի է ամէն զնահատանքի՝ իր սմբողջականութեամբ եւ նիւթի դասաւորումի յստակութեամբ. հոն կ'որդեգրուին բազմազան կարծիքներ, կը ներկայացուին զանազան խմբագրութիւններ մանրամասնօրէն, եւ հուսկ կ'իրակոս Արեւելցիի անտիպ ձեռագիրը կը ներկայացուի իր նորութիւն:

Վարդանանց գիւցաղնամարտի 1500ամեակին նուիրուած ուսումնասիրութիւն մը՝ Հայ Իրաւական յարաբերութիւնները հիմնարար դարուն խոլով, զետեղուած է հատորին սկիզբը: Անձեր, զէպքեր, պատճառներ եւ անոնց շուրջ պատմական խորհրդածութիւններ կը ներկայացուին հոն յըստակ դիժերով:

Հայ իրաւագիտութեան նուիրուած քրոնիկի բաժնին մէջ զարձակ կը վերադառնայ Ալաւկայ սրբուհի եւ Գոշի ձեռագիրն թուականի հարցերուն:

Հանդուցեալ հայագէտներու նուիրուած էջեր եւ ստացուած դիմքերու մատենագիտական ընդարձակ ցանկեր կը փակեն հատորը:

3) La Vierge Marie dans la littérature médiévale de l'Arménie - Grégoire de Narek et Nersès de Lampron (Collection Arménologique - Հայագիտական մատենաշար Թ. 1), Պէյրութ, Հրատ. Univ. St. Joseph, 1954 էջ 47:

Մեր երկու հոգեւոր հեղինակներուն զէմբերը կը ցուցադրուին ցայտուն դիժերով. Նարեկացի իր Աստուածայայտութեամբ Տաղով, Գումարք իր խմբիցով եւ Տօրոյ Բանով կը ներկայացուի իր հայ սրբազան Պիղգար մը. իսկ Լամբրոնացին իր վերափոխման ֆառով: Երկար կտորներ, երկու հեղինակներէն ալ, Փրանսերէն թարգմանութեամբ կը զեղարդան հատորը:

4) Un tableau de la Diaspora Arménienne. Première Partie: Les Arméniens de l'Union Soviétique (Extrait de Proche-Orient chrétien, 1956-57, pgg. 72). Deuxième Partie: Les Arméniens hors de l'Union Soviétique (Extrait de Proche-Orient chrétien, 1958-61, pgg. 81). Troisième Partie: Les organismes d'intérêt général (Extr. de Pr. Or. chr. 1962, pgg. 31).

Ամփոփ ու յստակ դիժերով ներկայացուած համապատկեր մըն է հայ քաղաքական ու եկեղեցական պատմութեան, կուսակցական ու մշակութային շարժումներուն, մեր վերջին յիսնամեակին շրջանին:

5) Les Inscriptions du Mont Admirable. Extrait des MUSJ, Beyrouth, 1962, t. XXXVIII, fasc. 14, pgg. 36.

Պատկն է 1932-1939 թուականներու ամառները

կատարած հնախօսական արշաւներուն զէպի Անտիոքի շրջանները, ուր կը գտնուի Ս. Սիմէոն սիւնակեացի փոքր լեռն ու հինաւուրց վանքը, 551ին հիմնուած: Ի յայտ եկած արժէքաւոր հնութիւններ՝ արձանագրութիւններ, կնիքներ, մետաղադրամներ, զերեզմաններ մեծ նպաստ կը բերեն սուրբին վարքին ու հրաշքներուն մասին եւ պատմական նոր լոյսով կը հաստատեն աւանդութիւններ:

6) Expédition archéologique dans l'Antiochène Occidentale - L'Eglise Arméno-Georgienne de Saint-Thomas. MUSJ, Beyrouth, 1964, t. XL fasc. 1, pgg. 144.

Նախորդէն առաջ պատրաստուած, եւ նոյն պայմաններուն մէջ, ընդարձակ աշխատութիւն մըն է, նուիրուած Անտիոքի շրջանին մէջ քրիստոնէական մնացորդներու պեղումներուն:

7) Le Génocide du Peuple Arménien (Le sort de la population arménienne de l'Empire Ottoman - De la Constitution Ottomane au Traité de Lausanne (1908-1923), Beyrouth, Impr. Cath. 1965, pgg. 128.

Պատմադէտ-բանասէրն է՝ որ այս գրքով կ'որդեգրէ Եզնիկի յիսնամեակը, գիտական հիմերով ու տուեալներով: Մուսա լեռան հերոսամարտին նուիրուած է վերջին գլուխը:

8) Histoire et Institutions de l'Eglise Arménienne. Evolutions nationale et doctrinale, spiritualité, monachisme; en appendice, une étude critique sur le plan primitif de l'Eglise de Vagharschabat par l'Architecte Pascal Paboudjian. Beyrouth, Impr. Cath. 1965, pgg. 386 (Coll. Recherches, t. XXX).

Հեղինակին վերջին գործը, յետ մահու հրատարակութիւն: Համադրութիւն՝ հայ եկեղեցական դարաւոր պատմութեան, հոգեւորականութեան, վանական կարգերու կազմին ու միանձնականութեան եւ նշանաւոր վանքերուն, Հայաստանէն արտասահման: Իր յաւելումը, ճիշտ փաստաւորութեան ուսումնասիրութիւնը՝ էջմիածնի տաճարին մասին, վերջին պեղումներու լոյսին տակ:

Մինչ ի սրտէ յաւիտենական հանդիստ կը մաղթենք Հ. Յովհ. Մըսրէրեանի բազմավաստակ հոգւոյն, եւ մեր ցաւակցութիւնը կ'ուղղենք իր Պատ. Միարանութեան, թող մեր այս հակիրճ տողերը, իր համեստ ծաղկեպսակ՝ վաստակաւոր հայագէտի թարմ հոգակոյտին, անկեղծ արտայայտութիւնն ըլլան մեր խոր դիմահայտներն, սիրոյն եւ յարգանքին: